Ստեփան Զորյան

Սպիտակ տան բնակիչները

Կան մենավոր, մենակ սրտեր
անհայտ, անտես հեռուներում,
խոր ու մթին անտառներում.
Ո՞վ է նրանց ողջույն բերում...

Մոլդովական երգից

Այդ տունը վաղուց, շա՜տ վաղուց է կանգնած անտառի մեջ: Ես նրան հիշում եմ դեռ մանկությունից:

Այնտեղ, ուր փոշոտ խճուղին, ինչպես մի գորշ ժապավեն, օձապտույտ ոլորումներով, իմ ծննդավայրից վազում է դեպի Սևան, այնտեղից միշտ երևում է նա՝ անտառապատ սարի գլխին բազմած: Ծառերի միապաղաղ կանչի մեջ այդ սպիտակ շենքը անցորդներին թվում է ինչ–որ խորհրդավոր բան: Աղոթասեր օտարականին թվում է մատուռ կամ վանք, իսկ Ռուսաստանից նոր եկած պետական պաշտոնյայի սրտում զարթեցնում է հազար ու մի կասկած, թե արդյոք հակապետական գործերի մի որջ չէ դա, արդյոք կեղծ դրամներ չե՞ն կտրում այնտեղ... Բայց թե՛ օտարականը և թե՛ պետական պաշտոնյան սխալվում են միշտ: Այդ սպիտակ տունը, որ գոռոզ կերպով բազմել է անտառի գլխին, հանրակացարանն է ծծումբի հանքի բանվորների, որոնցից սակայն դատարկ է հիմա: Կար ժամանակ, որ նա այդ վայրի տեղում իրենից ներկայացնում էր մարդկային մի փեթակ, որի մեջ բազմաթիվ ձեռքեր էին աշխատում առավոտից մինչև երեկո և բազմաթիվ գլուխներ էին ննջում երեկոյից

մինչև առավոտ: Բայց այժմ դատարկ է նա, ինչպես ծառի վրա հյուսված թռչունի մի բույն, որի մեջ եղած ձագերը իրենց մոր հետ թռել են վաղուց. նրա տերերը, թղթախաղում սնանկանալով, փակեցին հանքը, փակեցին հանրակացարանը և գնացին հանգստանալու քաղաքում... Բայց նրանք այնքան բարի եղան, որ չհեռացրին իրենց ծեր ծառային և թողին նրան այդ տանը պահապան:

Այդ ծառան քեռի Վարոսն է, սպիտակ միրուքով մի փոքրիկ ծերունի, որ շաբաթը մի քանի անգամ, երկաթածայր գավազանը ձեռին, ռուս զինվորի հաստ կոշիկներով, իջնում է գյուղ և կեսօրին վերադառնում մի փոքրիկ կապոց կամ մի տոպրակ թևը գցած:

Նա և իր պառավը վաղուց էին ապրում այդտեղ՝ իրենց հավերի և ծեր շան հետ միասին:

Ծեր ամուսիններն իրենց կնճռոտ դեմքերով, խոսելու եղանակով, շարժուձևով այնքան նման էին իրար, որ կարելի էր կարծել, թե խստապահ կրոնավորից դաստիարակված քույր ու եղբայր են: Երկուսն էլ խոսում էին ծոր տալով, զգույշ և իրարից ակնածելով, ինչպես նոր պսակված ժամանակ: Ինչպես պսակի առաջին օրերին, այնպես էլ հիմա, քաշվում էին իրար անուն տալ, և միմյանց կանչում էին «ա՛յ տո»: «Էսօր հավերին կուտ տվե՞լ ես, ա՛յ տո», հարցնում էր ծերունին: «Իհարկե, ա՛յ տո, իհարկե, տվել եմ», պատասխանում էր պառավը: Եվ այդ «այ տո»–ն նրանք արտասանում էին այնպես, ինչպես արտասանում են «հոգիս» «սիրելիս»: Զավակներ չունենալով, ծերերն այդ անտառի մեջ իրենց հոգատարությունն ու խնամքը նվիրում էին հավերին,պառավ շանը,այդ տանը և նրա մեջ եղած իրերին:

Առավոտները զարթնելով պառավը նախ և առաջ կուտ էր տալիս հավերին, մաքրում էր նրանց բույնը, երբեմն հանդիմանում նրանց, ապա օջախի վրա լափ էր պատրաստում շան համար: Իսկ ծերունին նախ պտտվում էր տան շուրջը, հետո մտնում ներս և սենյակները մեկ–մեկ դիտում, տեսնելու հո բան չի՞ պատահել:

Տունը և նրա մեջ եղած իրերն առհասարակ մեծ անհանգստություն էին պատճառում ծերերին: Ավելի անհանգստանում էր պառավը:

Ա՛յ տո, մի բան չպատահի տանը, երբեմն ասում էր նա խորհրդավոր, կարծես մի բան գուշակելով:

Ի՞նչ, ա՛յ տո, հարցնում էր ծերունին թաքուն երկյուղով:

Ո՛վ է իմանում, այ տո, հարամին շա՜տ, ավելացնում էր պառավը, նոր կասկած գցելով իր ծերունու սիրտը: Բան չգողանա՞ն...

Ո՛վ կհամարձակվի, ասում էր ծերունին, աշխատելով հանգստացնել թե պառավին, թե իրեն: Եթե մի բան ըլի, Բողարը կիմացնի...

Բողարը ծեր շունն էր. նա իսկապես զգաստ և աչաբաց էր, հարկ եղած դեպքում հնչեցնում էր իր խռպոտ ձայնը անտառի լռության մեջ:

Որ իմացնի, ի՛նչ պիտի անես, առաջ էր տանում խոսքը պառավը, ակնարկելով ամուսնու ծերությունը:

Ա՛յ, ասում էր ծերունին աչքերը հառելով պատից կախված հրացանին:

Հիսուս ու Քրիստոս, խաչակնքում էր երեսը պառավը տագնապով: Ինչե՞ր ես ասում, ա՛յ տո...

Նրանց անհանգստությունն ավելանում էր մանավանդ այն ժամանակ, երբ գիշերը փոթորիկ էր լինում անտառում: Երբ տունը շրջապատող վիթխարի ծառերը խուլ, անվերջ շառաչում էին քամուց և խոր անտառը դրնգում էր խավարի մեջ, ու դրա հետ միաժամանակ քամին ծղրտում հալածական դևի նման ծերերին թվում էր, թե ծառերի արանքում և թե պատերի տակ վխտում են հազար չար, հազար ավազակ: Անկողնի մեջ, համակ լսողություն դարձած, ականջ էին դնում փոթորկի ձայնին և մինչև լույս քուն չէր գալիս նրանց աչքերին: Նրանց անհանգստությունն աճում էր ավելի ձմեռ ժամանակ: Երբ ձյունն սպիտակ շուրջառ էր գցում ծառերի վրա, և հավքերը, նույնիսկ ագռավները հեռանում էին նրանց բնակարանի մոտից, ծեր ամուսինները փակվում էին իրենց սենյակում: Պառավը նստում և բրդե գուլպա էր գործում, իսկ ծերունին շուտ-շուտ փայտ էր ավելացնում վառարանի կրակին: Ախորժելի ջերմությունը ձմեռ ժամանակ զարթեցնում է հին–հին հուշեր, և նրանք պատմում էին իրար անցած

դեպքեր, մոռացված զրույցներ. երբեմն պառավը երանի էր տալիս գյուղում ապրողներին, որ տեղյակ են մնում աշխարհի բանին և շուտ-շուտ ժամ են գնում:

Ոչինչ, ա՛յ տո, Զատիկը գա, ճամփեն բացվի, դու էլ կերթաս, մխիթարում էր ծերունին այդպիսի դեպքերում:

Բայց հաճախ պառավին պաշարում էր մի անորոշ տխրություն և նա դառնում էր ծերունուն.

Ա՛յ տո, ի՞նչ պիտի անենք, եթե հանկարծ էստեղ մի բան պատահի մեզ:

Ի՞նչ կարող է պատահել, միամիտ հարցնում էր ծերունին:

Ո՛վ է իմանում, ա՛յ տո, հանկարծ հիվանդացա՞նք, ո՞նց պիտի տերտեր կանչենք ճաշակելու:

Էհ, խնդում էր ծերունին, տերտերն ի՞նչ ենք անում, ա՛յ տո, առանց տերտերի էլ յոլա կերթանք:

Ո՞նց թե... առանց ճաշակելու մեռնե՞լ, զարմանում էր պառավը, և փոքր–ինչ լռելուց հետո ավելացնում. չէ, ա՛յ տո, ես առանց ճաշակի չեմ կարող մեռնել... Էսօրվանից ասում եմ հենց որ ծանր հիվանդանամ՝ տերտեր կկանչես:

Է՞հ, ա՛յ տո, ինչի՞ ես տխուր բաներ ասում, նկատում էր ծերունին ակնհայտ դժգոհությամբ: Ուրախ բաներից խոսի...

Պառավը լռում էր մի փոքր՝ մտքի ետևից ընկած, և կրկին դառնում ծերունուն.

Ի՞նչ լավ կլիներ, ա՛յ տո, եթե գեղում ապրեինք:

Իհարկե, պատասխանում էր ծերունին, իհարկե, լավ կլիներ. իսկ եթե մի զավակ էլ ունենայինք, որ մեզ պահեր...

Եվ նրանք, երկուսը միասին, հառաչում էին առանց իրար երեսի նայելու:

Հառաչում էին ու լռում...

Երևի այսպես երկար կշարունակվեր նրանց կյանքը, եթե չպատահեր մի տխուր դեպք:

* * *

Ծերունին ազատ ժամերին սիրում էր պտտել անտառում: Ամառվա և աշնան օրերին նա երկար տարածություններ էր անցնում չոր փայտ ու պտուղներ հավաքելու: Այդպիսի դեպքերում ծեր, բրդոտ շունը զառամ քայլերով միշտ հետևում էր տիրոջը, իսկ պառավը շեմքում՝ ձեռը ճակատին, նայում էր նրանց ետևից:

Մի անգամ՝ գարնանը, այդպիսի շրջագայությունների ժամանակ, ծերունին շան շնորհիվ գտավ եղնիկի մի փոքրիկ ձագ՝ սուր–սուր ականջներով, որն այնուհետև դարձավ ծերերի հոգատարության ամենասիրելի առարկան: Սկզբում փոքրիկ կենդանուն նրանք կերակրում էին գյուղից բերած կաթով, ապա երբ նա սկսեց իրեն հավաքել, նրան ուտեցնում էին թրջած հաց, սառը կերակուր, կանաչ խոտ և ծառի տերև:

Պետք էր տեսնել, թե ինչպես ծերերը խնամքով, փոխեփոխ խոտ էին մոտեցնում փոքրիկ եղնիկի դնչին, ինչպես էին գուրգուրում նրան և սովորեցնում ման գալու եղանակը: Պառավը նրա համար փափուկ խոտերից շինել էր մի անկողին, ուր միշտ հանգիստ մշշոցով հանգստանում էր փոքրիկ կենդանին: Քնած տեղը նա այնքան անօգնական ու թույլ էր երևում, որ պառավը երկյուղով մտածում էր, թե չլինի մի բան պատահի նրան:

Ա՛յ տո, վախենում եմ, թե մի բան պատահի սրան, երբեմն կասկած էր հայտնում պառավը: Ի՞նչ ուտեցնենք, որ լավ ըլի:

Ծերունին մի փոքր միտք էր անում և ասում.

Ինչ որ իրա մերն է ուտում. խոտ, տերև, ջուր:

Բայց պառավը դրանով չէր գոհանում. պահանջում էր, որ ծերունին շուտ-շուտ կաթ բերի գյուղից: Եղնիկի ձագը նրան թվում էր իբրև մի որբ երեխա, որին պետք է լավ ուտեցնել, խնամել, գուրգուրել. և նա շա՜տ ափսոսում էր, որ չի

կարող իմանալ փոքրիկ կենդանու սրտի ուզածը, ուստի հաճախ գրկում էր նրան ու հարցնում.

Ի՞նչ կուզես, բիժո ջան:

Փոքրիկ անասունը միամիտ, մոլոր հայացքով նայում էր պառավին և տրտում խոնարհում թախծոտ աչքերը: Այդ տեսնելով՝ պառավը սեղմում էր նրան գրկին և համբուրում նրա գլուխը, աչքերը, ականջները:

Բիժո ջա՛ն, բիժո ջա՛ն...

Կարճ ժամանակում ծերերը, մանավանդ պառավը, այնպես ընտելացան եղնիկի ձագին, որ երբ նա մի րոպե չէր երևում, երկյուղով հարցնում էին իրար.

Բիժոն ու՞ր է, ա՛յ տո: Չըլի թե...

Ու տագնապով այս ու այն կողմն էին ընկնում «բիժոյին» որոնելու: Հաճախ գտնում էին շան մոտ նստած կամ նրա հետ խաղալիս: Ինչպես որդին կորցրած ծնողը գտնի զավակին, այդպիսի դեպքերում մե՛ծ էր լինում ծերերի ուրախությունը, փոխեփոխ համբուրում էին եղնիկին և գրկած տանում տուն՝ ժպտալով, հանդիսավոր, ինչպես մի նորակնունքի: Մի անգամ, սակայն, աշնան առաջին օրերին, փոքրիկ եղնիկն անհայտացավ հանկարծ:

Այդ օրը ծերունին տանը չէր. գնացել էր գյուղն ալյուրի: Ուստի պառավը մենակ դուրս ելավ որոնելու: Երկար փնտրեց եղնիկին տան շուրջը, պատերի տակ, հավանոցում, շան մոտ, ու ոչ մի տեղ չգտավ:

Բիժո՛, բիժո՛, կանչում էր նա և ինքն իր հետ խոսում. «Տեսնես ի՞նչ եղավ, տեսնես ո՞ւր գնաց»:

Ինքն իրեն խոսելով՝ մի առ մի նայեց մասրի թփերը, մտավ մացառների մեջ, կանչեց, որոնեց, բայց եղնիկը չերևաց:

Այդ տեսնելով, նա տան դուռը կողպեց, շանը վերցրեց և մտավ անտառ: Նրան թվում էր, թե եղնիկը տեսել է իր նման մեկին ու հետևել նրան, թե չէ, մտածում էր

նա, ի՞նչ պետք է պատահած լիներ:

Մի չոր ճղափայտ ձեռին, շունն ետևից, քայլում էր պառավը նեղ արահետով և շուտ-շուտ կանչում.

Բիժո՛, բիժո...

Նրա ձայնը կորչում էր շառաչող ծառերի աղմուկի մեջ:

Բարձրացած խուլ փոթորիկն ալեկոծում էր անտառը, և հողմահար տերևները, ինչպես դեղնագույն թիթեռների անհամար խմբեր, պտտվում էին ծառերի արանքում, ասես մի չար ձեռքից հալածված:

Չնայելով վատ եղանակին, պառավը շարունակում էր առաջ գնալ և խրախուսել շանը: Անցնելով սայթաքուն–սարի տեղերից, չոր ճղափայտերի կույտերի վրայից, անելով անսովոր վերելք ու վայրէջք, նա թեև սաստիկ հոգնել էր, քրտինքը թափվում էր քունքերից, բայց և այնպես չէր դադարում որոնել ու կանչել: Շունը լեզուն հանած, հոտոտելով վազում էր այս ու այն արահետով և շուտ-շուտ տիրուհուն նայում, ըստ երևույթին իմանալու, թե բավական չէ՞ արդյոք որքան փնտրեցին:

Երբ հասան մի փոքրիկ բացատի, շունը հանկարծ կանգ առավ և ականջները սրեց: Մոտիկից, շատ մոտիկից լսեց ինչ-որ մնչոց, որ նման էր անասունի ձայնի:

Բողա՛ր, նա՛ է, բիժո՛ն, ճչաց պառավն ուրախացած:

Շունն իսկույն հասկացավ տիրուհու միտքը և առաջ վազեց: Պառավն ուրախությունից դողացող քայլերով հետևեց նրան:

Նա՛ է, նա՛... Բիժո՛, բիժո՛...

Նրանք անցան բացատը և նորից մտան ծառերի մեջ, դիմելով ձայնի կողմը: Սակայն այնտեղ, ուսկից լսվեց մնչոցը, ոչինչ չերևաց. վերևից միայն, մի ծառի կատարից, ինչ-որ թռչուն թռավ թևերը թափահարելով:

Մի քանի րոպե պառավը մնաց կանգնած՝ խաբվածի պես շուրջը նայելով: Ապա դարձավ շանը.

Չէ, Բողար, բիժոն չէր, բիժոն չէր...

Իրիկնաժամ էր արդեն, երբ պառավը ձեռնունայն ու հուսահատ տուն վերադարձավ: Փոքրիկ եղնիկը չերևաց ոչ մի տեղ: Տուն դառնալով, նա զգաց մի խոր դատարկություն տան մեջ ու իր սրտում: Նրան թվում էր, որ մի հարազատ բան պակաս է, և ամեն բան այնպես չէ, ինչպես կարգն է: Եվ նրան վշտացնում էր ոչ այնքան կորուստը, որքան անօգնական վիճակը փոքրիկ կենդանու: Ու մտածում էր, թե ինչ պիտի պատահած լիներ նրան. տեսնես գե՞լ պատահեց, թե մի ուրիշ գազան, իմ խեղճ բիժո...

Ծերունին գյուղից եկավ մի փոքրիկ տոպրակ ալյուրով: Պառավի տխրությունը տեսնելով՝ նա անհանգստացավ.

Ի՞նչ է պատահել, ա՛յ տո:

Պառավն իր մոլոր հայացքը հառեց ծերունու դեմքին:

Բիժոն չկա, ա՛յ տո... Ման եկա. չկա... չգտա...

Ծերունին զարմացավ:

Պառավը մանրամասն պատմեց եղելությունը:

Այդ գիշեր նրանց քունը չտարավ: Երկար մտածում էին, խոսում, թե արդյոք ի՞նչ պատահած կլինի փոքրիկ կենդանուն, արդյոք ո՞ղջ է:

Ա՛յ տո, տեսնես ո՞րտեղ կլինի հիմի, շուտ-շուտ հարցնում էր պառավը:

Եսիմ, ա՛յ տո, ո՛վ է իմանում...

Չըլի՞ որսկան մարդիկ բռնեցին:

Դժվար թե... Շատ կարելի է մոլորվել է մի տեղ:

Կամ ո՛վ գիտի ոտքերն ընկել է պատատուկների մեջ, չի կարում դուրս գա...

Էդ էլ կպատահի, ա՛յ տո...

Առավոտը գնամ ման գալու:

Հա՛, ա՛յ տո, հա, գնանք. ես էլ կգամ... Իմ խե՜ղճ բիժո.... իմ խե՜ղճ բիժո....

* * *

Առավոտյան վաղ ծերերը ելան կորած եղնիկին որոնելու: Ծերությունից կքած ուսերով՝ նախ անցան տան շուրջը, նայեցին բոլոր անկյունները, փոսերը, խոռոչները, և ոչինչ չգտնելով, տունը փակեցին ու մի–մի փայտ ձեռներին մտան անտառ: Շունը հետևեց նրանց:

Արևը նոր ծագում էր: Խոտերի և ծառերի վրա փայլում էր ցողը, աշնանային այն առատ ցողը, որ երբեմն հիշեցնում է գիշերը տեղացած անձրև: Հազիվ մի քանի քայլ էին արել, բայց նրանց ոտքերն ու փեշերը շաղից թրջվել էին արդեն: Նրանք այժմ գնում էին այն կողմը, ուր պառավը չէր եղել առաջին օրը: Ծառերի կախ ընկած ճղները թաց տերևներով շուտ-շուտ դիպչում էին նրանց գլխին, երեսին, երբեմն էլ ճյուղերին հյուսված ոստայնը կպչում էր նրանց դեմքին, բայց այդ ամենին անուշադիր առաջ էին գնում նրանք չորս կողմն աչք ածելով:

Ա՛յ տո, ով գիտի մի տեղ քնել է, կասկած հայտնեց պառավը:

Շատ կարելի է, գիտես, այ տո, կանգ առավ ծերունին: Լավ կանեմ մի կանչեմ:

Եվ նա մի քանի անգամ իրար վրա կանչեց.

Բիժո՛, բիժո՜... բիժո՜...

Ձայն չկար: Անտառի մեջ շարժում չէր լսվում: Միայն ծառերից կաթում էր ցողը՝ հատ-հատ, ծանր կաթիլներով:

Մի փոքր տեղ գնալուց հետո ծերերը բաժանվեցին իրարից՝ առանձին որոնելու: Շունը գնաց պառավի հետ, իսկ ծերունին մնաց մենակ: Նա գիտեր, որ

եղնիկները սովորաբար նստում են ծառերի բների մոտ ու թփերի մեջ, ուստի և շուտ-շուտ նայում էր ծառերի բներին ու թփերին: Իսկ պառավը հետևում էր միայն շան գնացած ուղղություններին:

Ցողը շարունակում էր կաթել անտառում, ինչպես խախուտ տանիք ունեցող բնակարանը անձրև ժամանակ:

Առանձին–առանձին որոնում էին նրանք և շուտ-շուտ ծառերի խորքից կանչում իրար.

Ա՛յ տո, հե՛յ... գտա՞ր:

Չէ՛... ա՛յ տո, չէ՛... Դու գտա՞ր:

Չէ՛... չէ՞...

Եվ արձագանքը, կարծես նրանց ծաղրելու համար, կրկնում էր. «Չէ՛, չէ՛...»:

Երկար ու ապարդյուն որոնելուց հետո նրանք, վերջապես, նորից գտան իրար և վերադարձան տուն: Պառավը չէր ուզում դատարկ ձեռքով տուն դառնալ և կամենում էր շարունակել որոնումը. բայց ծերունին համոզեց նրան, որ դա զուր է: Այժմ պառավի ուսերն ավելի էին կքել, քրտինքը ծածկել էր նրա դեմքը, և նա դժվարանում էր խոսել: Ծերունին նույնպես լուռ էր:

Ես ախր երազը տեսա, ա՛յ տո... Տեսա, որ էսպես բան պտի պատահի, ասաց պառավը խորհրդավոր, հազիվհազ շնչելով: Հիմի դու ինձանից վախեցիր, ա՛յ տո, ավելացրեց նա ավելի խորհրդավոր:

Ինչե՛ր ես ասում, ա՛յ տո...

Է՛հ, հառաչեց պառավը և լռեց:

Երբեք նա այնքան հուզված չէր եղել, որքան այդ երկու օրը, մանավանդ այդ րոպեին... Փոքրիկ եղնիկի անհետացումը վրդովել էր նրա հանգիստը և նա մի վայրկյան չէր կարողանում մոռանալ նրան:

Հետևյալ ամբողջ օրը պառավն անցրեց տխուր: Մի օրվա մեջ կարծես նիհարեց, իսկ երկրորդ օրը մնաց անկողնում պառկած: Նա թեթև հազում էր:

Ի՞նչդ է ցավում, ա՛յ տո, ասում էր ծերունին, նայելով պառավի պղտոր աչքերին: Դու բիժոյի համար իսկի մի մտածի. եկող տարի մի ուրիշը կգտնեմ... Փառք աստծու, անտառում շատ կան...

Պատասխանի փոխարեն՝ պառավը խզզացնում էր միայն և թաց աչքերով նայում ամուսնուն: Մյուս օրը նա ծերունուն կանչեց իր մոտ և ասաց.

Ա՛յ տո, լավ կլիներ, որ ես ճաշակվեի:

Ծերունին լուռ նրան նայեց:

Տխուր բաներ մի խոսա, ա՛յ տո, ասաց նա:

Չէ, ա՛յ տո, չէ՛... Տեսնում եմ, որ չէ՛...

Պառավի աչքերում փայլեցին արցունքներ: Քիչ լռելուց հետո, նա շարունակեց.

Դու քեզ լավ կպահես, այ տո... Ծորերդ չթողես կեղտոտ, շանը սոված չպահես, խեղճ կենդանի է... Հավերին էլ լավ մտիկ արա...

Ծերունին ջանում էր արցունքները զսպել:

Ինչի՞ ես տխուր բաներ ասում, ա՛յ տո:

Չէ, ա՛յ տո, շարունակեց պառավը, Լավ կըլի, որ ճաշակվեմ: Բայց ամենից լավ կլիներ, այ տո, եթե մի անգամ էլ ժամ գնայի, խորանը համբուրեի՛... էլ բան հարկավոր չէր: Կամ թե չէ՝ մի՛ն էլ տեսնեի իմ հերանց տունը...

Դու կտեսնե՛ս, այ տո, կտեսնե՛ս, հույս տվեց ծերունին: Օրերը չհատան: Եթե կուզես, մի շաբթից հետո կերթանք:

Պատասխանի փոխարեն՝ պառավի բերանից մի խոր հառաչանք թռավ, և նա լռեց:

Ծերունին կռացավ դեպի նա:

Ա՛յ տո, ի՞նչ եղավ քեզ: Ա՛յ տո, կանչեց ծերունին:

Ա՛յ տո, կուզե՞ս գնամ տերտեր կանչեմ...

Պառավը չէր պատասխանում:

Նա արդեն մեռել էր:

Հաջորդ օրը ծերունին իջավ գյուղ և մի սայլ տարավ սպիտակ տուն՝ պառավի մարմինը փոխադրելու:

Թաղեցին նրան գյուղի գերեզմանատան ծայրում: Թաղումից առաջ ծերունին խնդրեց տերտերին, որ նա պառավին ճաշակի: Եվ երբ քահանան կատարեց նրա խնդիրքը, նշխարքի մի փոքրիկ կտոր դնելով մեռելի սառած շրթունքների արանքը, ծերունին շատ գոհ մնաց, որ անկատար չթողեց իր պառավի փափագը:

* * *

Այժմ սպիտակ տան մեջ ծերունին ապրում է մենակ՝ իր շան հետ միասին: Շուտ–շուտ նա իջնում է գյուղ և այցելում պառավի գերեզմանը: Առաջվա պես դարձյալ հսկում է իրեն պահպանությանը հանձնված տունը և նրա մեջ եղած իրերին, սպասելով կրկին, թե տերերը կգան մի օր և հանքը նորից կսկսի գործել: Հաճախ նստում է նա իր կացարանի շեմքին և, հայացքը հեռուն նետած, հիշում իր պառավին ու ինչ-որ լուռ դնդնում ինքն իրեն: Երբեմն էլ այս լինում է առանձնապես երեկոները, երբ մութն իջնում է անտառի վրա նա դառնում է ոտքերի մոտ պառկած շանը և խոսում նրա հետ.

Էդպես, Բողար, այ տոն էլ չկա՛, ասում է նա մեղմ, մտերիմ ձայնով: Նա մեզ մենակ թողեց ու գնա՛ց: Նա էլ չի՛ գա, Բողար, էլ չի գա: Անխի՛ղճ այ տո, խե՛ղճ այ տո...

Շունը, դունչը թաթերի վրա դրած, լուռ նայում է տիրոջ դեմքին ու աչքերը խոնարհում: Նա հասկանում է, թե խոսքն այն պառավի մասին է, ո՛րն իր համար

լափ էր պատրաստում և ո՛րը հիմա գնացել է ուր–որ...

Տեսնելով շան կարեկից լռությունը, ծերունին ոգևորվում է ավելի և շարունակում է իր զրույցը:

Մինչ այդ մութն ավելի ու ավելի թանձրանում է անտառում, և նրանք երկա՛ր–երկա՛ր մնում են միևնույն տեղը նստած...

1916